



## 4. ՀԱԶԵ-ԴԻԼՊԱՐԻ ՀԵՔՅԱԹԸ

Ժամանակով մեկ թագավոր կար, ուներ քառասուն տղա: Էտ թագավորն ասավ, թե ես պըտի ըսնեմ երկրներ ման գամ, էնենց մե տուն գտնեմ, որ մե մարդի քառասուն ախչիկ ըլնի, ուզեմ իմ քառասուն տղին, օր ուրանց մեջները խլրտմունք չըլնի, չըբժրկտվեն, խղճռնան:

Էլավ ուրան վազիր-վաքիլ վերուց, բավականի փող վերուց, զնաց երկրներ ման էկավ, մեկ տուն գտավ, քառասուն ախչիկ, ուզեց ուր քառասուն տղին: Էկավ ուրան տունը, ուրան մարդիկը էկան թագավորին տեսության:

—Թագավոր՝, դո՞ր գնացիր:

—Գնացի իմ տղեք նշանի, մեկ տուն քառասուն ախչիկ գտա, նշանի իմ տղերքին:

Մեկ ժամանակ մնաց, թագավոր պատրաստութեն տեսավ, զնաց խարսներ բերելու: Տղեներ հըմմեն տարավ, բավականի դոցուն տարավ: Պղտի տղեն չըգնաց:

Թագավորն ասավ.—Ինչի՞ չես գա:

Ասավ թագավորին պղտի տղեն.—Թագավոր՝, որ մենք հըմմեն գանք, մեր տուն կառավարող չըկա, դու զնացեք: Ես կըմնամ տուն կառավարեմ: Թե էս տեխեն էթալու, թե էն դեխեն դառնալու Ղըզըլ-Խարապեն չըմնաք:

—Ինչի՞, թագավորի՝ տղա:

—Էնտե վտանգավոր տեղ ա, լավ տեղ չէ:

—Շատ լավ, —կասե, —շատ լավ կասես:

Իմաստուն էր պղտի տղեն, թագավորին հայտնի չէր, թե ուրան տղեն իմաստուն ա: Գնացին մարդիկը: Գնացին խասան էտ գեղը, թագավորի խնամու տունը, իրեք չորս օր մացին էտտեղ, ուրան խարսներ պատրաստեց, նաղարով, զուռնով, խաղով, ուրախութենով վերուց էկավ: Էկան չուր Ղըզըլ-Խարապեն: Ղըզըլ-Խարապեն շատ լավ տեղ էր, ծաղիկ-ծաղկունքով տեղ էր, էտ տեղին շատ փափաքան, ասեցին՝ գիշերը մնանք ըստե:

**Թագավորն ասավ.—Իմ պղտի տղեն ասավ՝ մի՛ մացեք Էտտե՛:  
Ես երկուդ կանեմ:**

Էն իրան զոշունի մարդիկն ասին.—**Թագավո՛ր, ի՞նչ կա, թա-  
գավո՛ր, մի՛ վախեցիր, մենք դաս ենք: Մեկ մարդիս վրա հարիր ջան  
գա՝ չըկանա մեզի հաղթա:**

**Զատորներ զարկին, մնացին Էտտե՛:**

**Առավոտուն հելան տեսան, որ մեկ վիշապ էկե ուրանց բոլոր  
փաթթե, պոչ գլոխ զրե մոտ հիրար, ինչպես թե մե բատամ:**

**Թագավորն ասավ, թե իմ տղեն կասե՛ Ղըզըլ-Խարապեն մի՛  
մացեք, մնեք չըլսանք, հրապ էս ի՞նչդ պղտի ընցընենք, ի՞նչդ պղտի  
էթանք: Թագավորը լաց էլավ, ասավ. «Իմ տղեքներ էլ կորուսան,  
իմ խարսներ էլ»:**

**Չոչունի մարդը ուրանց թվանքները պատրաստին, ուրանց  
թրերը պատրաստին, խեծան ձիանք, ասին. «Թագավո՛ր, մի՛ վա-  
խեցի, մկա կըբրտենք էս վիշապին»:**

**—Չէ՛, չէ՛, անխե՛լք մարդիկ, էս ի՞նչ ա, որ դու ըստրան բըր-  
տեք: Ո՛չ թվանք կըսպանա, ո՛չ թուր կըկտրա, որ ձեռք տվիք, մեր  
բոլորին դու կուտա:**

**—Ապա ի՞նչ կասես, թագավո՛ր:**

**—Արեք մեկ չորս իշխան մարդ ինձի խետ, էթանք մոտ էտ վի-  
շապ, տենանք մեր մեղք ի՞նչ ա:**

**Գնացին մոտ էտ վիշապ:**

**Խարցուց թագավոր.—Վիշա՛պ ախապեր, մեր բոլոր ինչի՞ ես  
բոնե: Կը խնդրվեմ մեզի ճամփա՛ տուր, էթանք, մեզի մի՛ սպանա,  
իմ տղեներ մուրապի վրա են, որ ըսպանես, քեզի շատ մեղք կըլնի:**

**—Չէ՛, չէ՛, թագավո՛ր, բան չեմ ասե:**

**—Ապա ի՞նչ կասես:**

**—Քո պղտի տղեն ո՞ւր ա:**

**—Իմ պղտի տղեն տուն ա, վիշա՛պ ախապեր:**

**—Էն քո պղտի տղեն թե՛, տո՛ւր ընձի, տեղ կօղորկեմ, ձեզի ճամ-  
փա տամ՝ գնացեք:**

**—Վիշա՛պ ախապեր, ճամփա՛ տուր, էթանք, տղեն կօղորկեմ, գա:**

**—Չէ՛, չէ՛, թագավո՛ր, կըխարես:**

**—Չեմ խարե, վիշա՛պ ախապեր:**

**—Թագավո՛ր, ճամփա՛ կըտամ, կէթաս, չըխարես, օղորկես, գա,  
որ խարեր ես, տղեն չէկե, կուգամ քաղքիդ բոլորը կըփաթթեմ,  
հեմմեն կըսպանեմ, ջրասուզ կանեմ, քու թագավորութեն կըվեր-  
ջացում:**

**—Չէ՛, չէ՛, վիշա՛պ ախապեր, չեմ խարե, կօղորկեմ, գա:**

Վիշապ ճամբախ տվեց թագավորին, ուր դոչունին, ուր տղերքին, ուրան խարսներին, էկան խասան ուրանց քաղաքը՝ նիաժ, տիսուր:

Պատի տղեն խարցուց.—Թագավոր, ի՞նչի ուրախութեն չեք էնե:

—Որդի ջան, ջանս կըցավա, նեղացեր եմ:

—Զէ՛, չէ՛, թագավոր, ասսա՛, տենամ: Ես քեզ չասի՞ Ղըզըլ-Խարապան մի՛ մաց, վիշապն էկավ ձեզի բռնե՞ց:

—Խա՛, որդի՛ ջան, էկավ, բռնեց:

—Ի՞նչ ասավ, թագավոր:

—Քեզի կուզեր:

—Վնաս չունի, թագավոր, ես կէթամ:

—Զէ՛, որդի՛ ջան, մի՛ գնա:

—Հապա ի՞նչ, թագավոր:

—Խափեցի, ճամբախ տվեց, էկանք, էլ բան չըկա:

—Թագավոր, էնի խափվող մարդ չէ, որ ես չէթամ, կուզա քաղաքի բոլոր կըբռնա, հրմմեն կըկոտորա, ես կըլնեմ պարտական: Դու, թագավոր, իմ ախաբերներ պսակա՛, իմ կնիկն էլ պախա՛քառսուն օր իմ ճամբախն իշկա, էկա՛ էկա, չէկա՛ զաթի չէկա:

Ծնորչակալ էղավ ուրան հորից, ուրան մորից, ուրան ախաբերներից, խարսներից.—Իմ ճամբախ իշկացե՛ք չուր քառսուն օր: Է, կեցե՛ք բարով, ես գացի:

Թագավորի տղեն գնաց: Գնաց խասավ Ղըզըլ-Խարապեն: Վիշապը տեսավ, որ տղեն էկավ, սարից հիջավ:

—Հա՛, թագավորի՛ տղա, էկա՞ր:

—Էկա, վիշա՞պ ախաբեր:

—Գինա՞ս՝ ինչի իմ դանչե քեզի:

—Ինչի՞ ես դանչե, վիշա՞պ ախաբեր:

—Էթաս Հազե-Դիլպար բերես:

—Է, վիշա՞պ ախաբեր, եսիմ Հազե-Դիլպար դո՞ր ա:

—Գնա խարցընելով գտի՛:

—Ո՞ր կողմն էթամ:

—Գնա՛ թրդ արևմուտ:

Տղեն գնաց: Գնաց հասավ մեկ յոթ ճամփարաժին, տեսավ, որ մե խալիվոր մարդ նստե ըստե, բարե տվեց էտ խալիվորին:

Էտ խալիվորն ասավ, թե՛ տղա՛, դո՞ր կէրթաս:

Թագավորին տղեն ասավ.—Կէթամ Հազե-Դիլպար բերելու:

—Թագավորի՛ տղա, էն վիշա՞պն օղորկեց քեզի:

—Խա՛, խալիվոր, էն վիշապ օղորկեց ինձի:

—Թագավորի՛ տղա, ես տասնը՛ինդ տարեկան ի, Հազե-Դիլ-

պարի սիրուն նըստեր եմ էս ճամփու վրա, ինչքան մարդ գնացած է Դիլպարին, իմ կշտով էկան ընցան, մեկն ընձի բարև չըտվեց, դու բարև տվեցիր, ես քեզի խրատ կրտամ: Որ Աստված Հաջողեց, Հազե-Դիլպար որ բերեցիր, բե՛ր, տեսնեմ ես, քեզի խալալ ըլնի, տա՛ր, զնա՛: Ահա իմ մուրսից քեզի մե մազ կուտամ, ինչ վախտ որ նեղի ընկար, էս իմ մազը տու կրակ: Մեկ չամի գերան կըրերա, կըքցա քու դեմը Հազե-Դիլպար, մե քեչե ուրագ կըտա քեզի, էն չամի գե-րան էն քեչե ուրգով պըտի ջարդես, գիշեր, մութ տեղ: էս իմ մուրսի մազը կըքաշես էն քեչի բերանը՝ կըլնի պողպատից ուրագ, էն չամի գերան կըջարդես: Որ կերակուները էփի, ձեռքիդ ուրագ որ քցիր գետին, գըլնի քեչա: Դեհ գնա՛, Աստված քու բան Հաջողե՛:

Գնաց էտ մարդը պատահավ մե ջրի, տեսավ, որ մըրջըմներ էկած է, ջուրը պըտի ընցընին, չեն կանա: Էտ թագավորի տղեն խղճահարգավ, էտ ջրի դրաղ ցախեր կար, բրդեց, բերեց քցեց ջրի վրա, արավ կարմունջ: Մըրջըմներ հընցան ջուր: Թագավորի տղեն էլ ջուրն ընցավ, էն մըրջըմների ջոջը թագավորի տղին ասաց. «Թագավորի տղա, դո՞՞ր կէթաս»:

—Մըրջո՛ւմ ախակեր, կէթամ Հազե-Դիլպարին բերելու:

—Նատ զոռն ա, չես կանա, թագավորի' տղա:

—Մենք էկեր ենք էս ջրի դրաղը, կըթափենք էս ջուրը, ճամբախ չըկար, որ ընցընինք, մեկ մարդ մեզի տերութեն չէր էնե: Դու էկար կարմունջ շինիր, ջուրն ընցանք, լավութեն արեցիր մեզի, չնորհա-կալ ենք, մե խրատ կրտամ քե, թագավորի' տղա: Հազե-Դիլպար մե խալվար կորեկ, մե խալվար սուլբուտ կըխառնա հիրար, կըլցա մե օթախի մեջ, քեզի ճրագ չի տա, կրակ չի տա, մե գիշեր պըտի ջոկես ըտրանք իրարուց: Ջոկիր՝ Հազե-Դիլպար քեզի կառնի, չըջո-կիր՝ կըսպանա: Ես իմ թևկից մե թեպուր կըտամ քեզի, ինչ վախտ որ էտենց կանա, իմ թեպուր կըտաս կըրակ, մենք կուգանք կըխաս-նենք: Դեհ գնա՛, Աստված քու բան Հաջողի՛:

Թագավորի տղեն չնորհակալ էլավ ու գնաց: Գնաց պատահավ մե ջաղացպանի: Տեսավ, որ էտ ջաղացպանը, բորիկ, զլոխ բաց, չորերը խանուկ, մտի ալուրտուն, ջաղացն ալուր կալա, էտ մարդն էլ կըվերու լցու ուրան բերան. մե տեխից էլ կասե. «Ես անոթի մե-ռու»:

Թագավորի տղեն բարև տվեց, էտ ջաղացպանին մաջալ չըկար, թագավորի տղի բարև չառավ, որ դան իջավ, ջաղաց կանավ, ջա-ղացպան թագավորի տղի բարևն առավ:

—Թագավորի' տղա, դո՞՞ր կէթաս:

—Ջաղացպան, կէթամ Հազե-Դիլպարին առնելու:

—Վէշա՞պն օղորկեց քեզի:

—Հա՛, ջաղացպա՞ն:

—Զոռն ա, չես կանա բերե: Զանդըկից բատան ա շինե Հազե-  
Դիլպար, զլիխից բուրջ, մացե մեկ հատ պակաս: Թագավորի՛ տղա,  
դու ինձի բարե տվիր, ես քե մե խրատ տամ:

—Ասա՛, ջաղացպա՞ն:

—Ես իմ մուրքից մե մազ կրտամ քեզի, քառասուն դազան կե-  
րակուլ, քառասուն օչխար մորթեն, էփեն դնեն դազանների վրա,  
յոթը ջաղաց գախընցագախ ալուր աղա, թըխեն խաց, մե գիշեր  
մենանակ պըտի ուտես Էտի, խըլըսցընես, որ Հազե-Դիլպար քեզի  
առնի, էն ժամանակ իմ մուրսի մազ կրտաս կրակ, ես որ խասա, քե  
բան չունիս: Գլուխ քար, մե օր էլ է կշտանամ: Դեհ գնա՛, Աստված  
քու բան հաջողի՛:

Գնաց խասավ Հազե-Դիլպարի քաղաք: Մե օր, էրկու օր քաղքի  
մեջ պըտըտավ, քաղքի ամեն վերը դիր հիմցավ, գնաց նստավ վըր  
Հազե-Դիլպարի բինակ-տաշուն:

Հազե-Դիլպարի ջաղիեքը Հազե-Դիլպարին ասին.—Հազե՛-  
Դիլպար, քեզի ուզող է էկե:

Հազե-Դիլպարն էելավ դուս, տեսավ, որ մե լավ երիտասարդ  
տղա.—Հա՛, թագավորի՛ տղա, ընչի՞ ես էկե:

—Հազե-Դիլպար, էկեր եմ քե առնելու:

—Կանա՞ս իմ արած բաները կատարե, որ առնեմ քեզի:

—Աստված օղորմած ա, Հազե՛-Դիլպար:

—Զես կանա, թագավորի՛ տղա, լավ տղա ես, ափսոս ես, քեզի  
կըսպանեմ, արի էթանք, քեզի լավ պատվեմ, ճամփու դնեմ, գնա՛:  
Բատանից մե ջանդակ է պակաս, շատ քեզի պես ջահիներ էկած  
ա, ըրկարցած ինձի տանել, ըսպաներ եմ:

—Զէ՛, Հազե՛-Դիլպար, ինչ կանես, արա՛, ես կայնուկ եմ:

Հազե-Դիլպար դանչեց ուր ջաղիեքին.—Գնացեք մեկ չամի գե-  
րան բերեք, մե հատ քեչից ուրա՛գ բերեք:

Գնացին բերին, պատրաստին:

—Թագավորի՛ տղա, էս պըտի ջարդես ուրագով էս գիշեր:

Տղան ասավ.—Շա՛տ լավ, Հազե՛-Դիլպար:

—Էս տղին տարեք պատվե՛ք, —Հազե-Դիլպար կասա:

Տարան տղին պատվեցին, մացին չուր իրկուն: Իրկուն տղեն  
գնաց չամի գերանը ըսկանց ջարդել, խալիկորի մազ քաշեց ուր-  
կի բերան, էելավ պողպըտից ուրագ, էտ գերանը ջարդեց. ուրագը  
քցեց գետին, էելավ առաջվա քեչա:

Առավոտ Հազե-Դիլպար էկավ, տեսավ, որ գերան ջարդեր ա,  
ջաղիեքին ասավ. «Տարեք էս տղին լա՛վ պատվեք»:

—Է՛, թագավորի տղա, էս մեկը կատարիր, մնաց էրկուսը:

— Հազե՞-Դիլպար, Աստված օղորմած ա:

Մնաց չուր իրիկուն: Իրկուն մե խալվար կորեկ, մե խալվար սուլբուտ խառնեց իրար, լրցեց մե օթախ, ասավ. «Թագավորի' տղա, Էս սուլբուտ, Էս կորեկ իրարուց ջոկես Էս գիշեր, առանց ճրագ, մուլթ տեղ: Որ ջոկիր, քեզի կառնեմ, որ չըջոկիր, կըսպանեմ»:

Թագավորի տղեն գնաց էտ օթախ, մրջումի թեպուր տվեց կրակ, մըրջըմը էկավ խասավ, մեկ հատ մե հատի մեջ չըթողին, ջոկեցին մեկ սահամթվա մեջ: Մնաց առավոտ, Հազե՞-Դիլպար էկավ տեսավ, որ ջոկեր ա, ասավ. «Ջառիե՞ք, Էս տղին տարեք լա՞վ պատվեք, Էս տղեն ինձի կըտանա»:

Մնաց իրիկվան, Հազե՞-Դիլպար ասավ. «Քառասուն դազան փլա՞վ էկեք, քառասուն հատ օչխա՛ր մորթեք, էփեք դրե՞ք դազանմերի վրեն, յոթը ջախցի գալիքնցագաղ աղա՝ թըխե՞ք խաց, դրեք էտ դազըններու կուշտ, որ թագավորի տղեն գա, ուտա»:

Ջառիեք պատրաստեցին, տարան բոլորը լցին մե օթախ: Իրիկուն Հազե՞-Դիլպար թագավորի տղուն կանչեց տարավ, ասավ. «Թագավորի' տղա, Էս գիշեր Էս կերակուկ հըմմեն պըտի ուտես: Կերար՝ կառնեմ քեզի, չըկերար՝ գըլոխրդ կըկտրեմ»:

Թագավորի տղեն գնաց մտավ օթախը, դուրը փակեցին վրեն, ճրագն անցուցին: Թագավորի տղեն ջաղացպանի մազ տվեց կրակ, ջաղացպան հասավ. «Հա՛, թագավորի' տղա, ի՞նչ ես պատրաստե ըսկի»: Թագավորի տղեն ասավ. «Սարգի՛ս Կեմխոր, ամեն մեկ բան Էլ պատրաստ ա»:

— Դե շո՛ւտ արա, ես անոթի մեռա:

Սարգիս Կեմխոր սկսեց ուտելը: Մեկ սահամթվա մեջ ինչ որ կար, կերավ խըլքասաց, հըլք կասեր, թե անոթի եմ: Կերավ, հելավ գնաց:

Տղեն մնաց հառավոտ, Հազե՞-Դիլպար էկավ տեսավ, որ զատ չէ մնացե, հըմմեն կերեր է:

Ասավ.— Թագավորի' տղա, ընձի տարար: Դու ըլնես, քու Աստված, քեզի համա՞ր կըտանես, թե՞ո ուրիշի:

— Զէ՛, Հազե՞-Դիլպար, ինձի համար կըտանեմ:

Հազե՞-Դիլպար թագավորի տղին տարավ, գնացին նստան մե սուֆրի վրա խաց կուտին Էս խետ:

Խաց կերան պրծան, Հազե՞-Դիլպարն ասավ.— Թագավորի' տղա, արի գյուլաշ կպնենք:

Հելան դուս, դանչեց ուրան հերը, իշխանները, վաքիլը, վազիրը: Էկան թոփ էլան, սկսեցին թագավորի տղեն ու Հազե՞-Դիլպար գյուլաշ կպնել:

Հազե՞-Դիլպարն ասավ թագավորի տղին.— Թագավորի' տղա,

դու ընձի վրա չես կանա, ես դվամով եմ, որ կըխասնենք հիրար, ես ընձի թույլ կըտամ, դու տփի գետին:

Էտենց էլ էլավ, Հազե՞-Դիպար գնաց ուրան օթախը, քառասուն ոտ փիլաքան բանձր մեկ դազան բերեցին, քառասուն կանթեն, բերին գինին լիքը լրցին, էրկու մարդ տկողցըրին, կայսեցըցին փիլաքաններու տակը, Հազե՞-Դիպար թագավորի տղին ասավ. «Թագավորի՛ տղա, էս իմ մատանիք կըտամ քեզի, կըբռնես ձեռող, էն դազան պըտի վերուն դնեն վըր քու թևին, էս քառասուն փիլաքան պըտի բանցըցուս, բերես մոտ ընձի: Մուղաթ՝ կենաս՝ մեկ կաթ չըթափի, որ թափավ, իմ խեր քեզ կըսպանի: Իմ էս մատնիք կըքցես դազանի մեջ, որ մերվի, չըթափի»:

Իսկ էտենց արեցին, դազան դրին վըր թագավորի տղի թևին, առավ հելավ, մեկ կաթ էլ չըթափավ, տարավ դրեց Հազե՞-Դիպարի կուշտ, Հազե՞-Դիպարի ձեռնեն բոնեց, առավ էկավ: Էկավ հասավ հալիփորին, խալիփորն ասավ. «Թագավորի՛ տղա, բերի՞՛ Հազե՞-Դիպար»:

Թագավորի տղեն ասավ.—Բերի:

—Հազե՞-Դիպար,—հալիփոր կասա, —օխտանասուն տարեկան եմ, քու սիրուն էս ճամփու վրեն նստելով սիվտըկա, դու ընես քո Աստված, արի նստի՛ր, իմ գլուխ դնեմ քո չոքի վրեն քնեմ, իմ կարոտութեն քեզնե առնեմ, ե՛լ, գնա՛:

Հազե՞-Դիպարը էկավ նստավ, խալիփոր գլուխ դըրեց Հազե՞-Դիպարի չոքի վրեն քնավ, որ ուրա քուն առավ, խալիփորը դարձավ խող: Հազե՞-Դիպար բերեց էն խալիփորի վրեն մեկ քումբեթշինեց, քումբեթի վրեն գրեց. «Այսիկ Հազե՞-Դիպարի սիրած խալիփորն է, որ նրա սիրուց խող դարձավ»:

Նելան ընկան ճամբախ՝ գնացին: Էկան հասան Ղըզըլ-Խարապեն: Վիշապ, որ սարից տեսավ, ֆշշալով էկավ հասավ: Երկուղն Հազե՞-Դիպարին առավ:

—Ախ, թագավորի՛ տղա, թե ես գինի ինձի պիտի բերիր էս վիշապի համար, քեզի շատ սաղ կըթողի:

Վիշապն ասավ.—Հազե՞-Դիպար, մի՛ վախեցի, մի՛ վախեցի, բան չեմ ասե:

Վիշապը էկավ հասավ Հազե՞-Դիպարին, ասավ.—Հազե՞-Դիպար, նստի՛, իմ գլուխ դնեմ քո չոքի վրա՝ քնեմ:

Հազե՞-Դիպար նստավ՝ վիշապ գլուխ դրեց ընտրա չոքին, մեկ կուշտ քնավ: Օր կուշտ քնավ, վիշապի շապիկ պատռավ, հելավ մերիտասարդ սիրուն տղա:

—Հազե՞-Դիպար,—ասավ,—գինաս՝ ինչի էլմալ հելա, քո սիրուն վիշապի շապիկ էկավ վըր ընձի, քաշվա սարեր. քանի-քանի

մարդիկ օղորկի, ըսպանիր: Դե գնա՛, ես շնորհակալ եմ քեզնի, դու իմ քուր, ես քեզի ախազեր, թագավորի տղեն է ջաֆա քաշե քեզի բերե, դու ընտուր ես խալալ:

Հելան էս խետ էկան, խասան ուրանց խոր քաղաք, յոթն օր, յոթ գիշեր խաղ-խասնիս, նաղարա-զուռնա արեցին, ընդոնց պսակեցին: Էնոնք հասան ուրանց մուրագին, դուք էլ խասնեք ձեր մուրագին:

